ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՆԳՀԾՁԲ-20/59

ք. Երևան «06» 05 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան»-ը, ի դեմս տնօրեն Ջանիկ Սևոյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է միջոցառումների հետ կապված ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 (հինգ)** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5490000 (հինգ միլիոն չորս հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան»
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Իրավաբանական հասցե՝
Կառավարական տուն 2,	ՀՀ գ. Շահումյան,Գայի 8
ՀՀ ֆինանսների նախարարության	Գործունեության հասցե՝
գործառնական վարչություն	ՀՀ ք.Երևան, Տերյան 105/1
Հ/Հ 900011032472	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 1930070102110100
	ՀՎՀՀ 37488172

Գլխավոր քարտուղարի տեղակալ

---------- Վ. Գասպարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Տնօրեն՝

---------- Ջանիկ Սևոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
«06» 05 2020 թ. կնքված
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/59 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման ժամկետը
1	79951100/2	միջոցառումների հետ կապված ծառայություններ	**Ծառայությունը նախատեսում է «Երիտասարդական մրցանակաբաշխություն-2020» միջոցառման կազմակերպում:** Միջոցառումը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքում: Մրցանակաբաշխությունն անցկացվելու է հետևյալ անվանակարգերում՝ 1. Երիտասարդ բժիշկ, 2. Երիտասարդ բնապահպան, 3. Երիտասարդ գյուղատնտես, 4. Երիտասարդ գիտնական, 5. Երիտասարդ մշակութային գործիչ/կոլեկտիվ, 6. Հայրենիքի երիտասարդ պաշտպան, 7. Երիտասարդական աշխատող, 8. Երիտասարդ մարզիկ, 9. Երիտասարդ հայրենադարձ, 10.Երիտասարդ գործարար, 11.Տարվա երիտասարդ: Հաղթողների ընտրությունը իրականացվելու է երեք փուլով: **Փուլերի անցկացումը նախատեսվում է իրականացնել ներքոնշված չափանիշներին* համապատասխան:**	դրամ	5490000	1	2020 թվականի հունիսի1-ից, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում և կավարտվի մինչև 2020 թվականի դեկտեմբերի 15-ը:

Փուլերի անցկացման չափանիշներ

1-ին փուլ.

1-ին փուլը իրականացվելու է 2020 թվականի հունիսի 1-ից, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում մինչև հոկտեմբերի 28-ը:

Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովելու է՝

1.1 Մրցանակաբաշխության տարբերանշանը և ոճը՝ քննարկելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) երիտասարդական քաղաքականության (այսուհետ՝ ԵՔ) վարչության հետ (1-ին փուլը սկսվելուց հետո 22 օրվա ընթացքում):

1.2 Մրցանակաբաշխության վերաբերյալ տեղեկատվության տարածումը՝ հեռուստատեսությամբ, կայքերով, թերթերով, սոցիալական ցանցերով (Մրցանակաբաշխության տարբերանշանի և ոճի մշակումից հետո մինչև 2020 թվականի հոկտեմբերի 15-ը):

1.3 Համացանցով թեկնածուների առաջադրման համակարգի առակայությունը և անխափան աշխատանքը և տվյալների տրամադրումը ԵՔ վարչությանը: (Մրցանակաբաշխության տարբերանշանի և ոճի մշակումից հետո մինչև 2020 թվականի հոկտեմբերի 15-ը):

Թեկնածուները կարող են առաջադրվել հետևյալ անվանակարգերի համար՝

Երիտասարդ բժիշկ,
Երիտասարդ բնապահպան,
Երիտասարդ գյուղատնտես,
Երիտասարդ գիտնական,
Երիտասարդ մշակութային գործիչ/կոլեկտիվ,
Հայրենիքի երիտասարդ պաշտպան,
Երիտասարդական աշխատող,
Երիտասարդ մարզիկ,
Երիտասարդ հայրենադարձ,
Երիտասարդ գործարար:

Համացանցով բոլոր ցանկացողները նշված անվանակարգերում առաջադրելու են իրենց թեկնածուներին՝ 16-30 տարեկան երիտասարդներ, երիտասարդական խմբեր (խմբերի անդամներից առնվազն մեկը պետք է լինի երիտասարդ):

Համակարգում առաջադրվելու համար որպես պարտադիր լրացման պայման պետք է լինեն՝ թեկնածուի անուն, ազգանունը, 2020 թ ընթացքում թեկնածուի ձեռքբերումների մասին տեղեկատվություն, լուսանկար:

1.4 Համացանցով առաջադրված թեկնածուների վերաբերյալ տեղեկատվության ամփոփում, ճշգրտում, ստուգված և ամբողջական տեղեկատվության ներկայացում ԵՔ Վարչությանը՝ այդ թվում թեկնածուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը և կոնտակտային տվյալները (2020 թվականի հոկտեմբերի 15-22-ը):

1.5 Առցանց քվեարկության կազմակերպում՝ համաձայն վերջնական ցուցակների (2020 թվականի հոկտեմբերի 22-27-ը):

Համակարգով մրցանակաբաշխության թեկնածուների առաջադրվելուց հետո Ծառայություն մատուցող կազմակերպությունը կազմկերպելու է առցանց քվեարկություն, որին կարող են մասնակցել ՀՀ բոլոր քաղաքացիները:

1.6 Քվեարկության արդյունքների տրամադրում ԵՔ վարչությանը (2020 թվականի հոկտեմբերի 28-ին):

2-րդ փուլ.

2-րդ փուլն իրականացվելու է 2020 թվականի նոյեմբերի 11-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 2ը:

Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովելու է՝

2.1 Յուրաքանչյուր անվանակարգի համար եզրափակիչ փուլ անցած 3 թեկնածուների (ցանկը կտրամադրի ԵՔ վարչությունը մինչև 2020 թվականի հոկտեմբերի 28-ից մինչև 2020 թվականի նոյեմբերի 11-ը) վերաբերյալ տեղեկատվություն պարունակող տեսանյութերի պատրաստում:

Տեսանյութերը պետք է պարունակեն տեղեկատվություն յուրաքանչյուր թեկնածուի 2020 թվականի ընթացքում լավագույն ձեռքբերումների վերաբերյալ: Յուրաքանչյուր տեսանյութի տևողությունը պետք է լինի 1,5-2 րոպե: Տեսանյութերի վերջնական տարբերակը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ (մինչև 2020 թ. դեկտեմբերի 2-ը):

3-րդ փուլ.

3-րդ փուլն իրականացվելու է 2020 թվականի դեկտեմբերի 3-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 15-ը: Եզրափակիչ երեկոյի օրը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

Մրցանակաբաշխությունը կիրականացվի Երևան քաղաքի Կենտրոն համայնքում, 300-տեղանոց հարմարավետ տաքացվող տարածքում:

Մրցանակաբաշխության երեկոյի ընթացքում կկազմակերպվի ոռկ և/կամ ջազ խմբերի և համույթների 90 րոպե տևողությամբ համերգային ծրագիր:

Երեկոյի ընթացքում յուրաքանչյուր անվանակարգից երեք թեկնածուների վերաբերյալ տեսանյութերը կցուցադրվեն էկրաններին և հանդիսատեսը ուղիղ քվեարկության միջոցով կընտրի հաղթողին տեղում:

Յուրաքանչյուր 2 անվանակարգի ներկայացումից հետո կիրականացվի երաժշտական մեկ համար կամ կատարում:

Բոլոր 10 անվանակարգերի քվեարկությունից հետո հաղորդավարը կհայտարարի «Տարվա երիտասարդ» 11-րդ անվանակարգի մասին:

Էկրաններին դուրս կբերվեն յուրաքանչյուր անվանակարգերում առաջին տեղը զբաղեցրած բոլոր 10 թեկնածուների անուն ազգանունները, լուսանկարներն ու նրանց 2020 թվականի ձեռքբերումների մասին տեղեկատվությունը, հանդիսատեսը արդեն յուրաքանչյուր անվանակարգում առաջին տեղ զբաղեցրած 10 թեկնածուներից կընտրի տարվա երիտասարդին:

Յուրաքանչյուր հաղթողի կտրամադրվեն հավաստագիր և մրցանակ-հուշանվեր:

Համերգային ծրագրից հետո հաղթողներն ու հյուրերը կլուսանկարվեն մրցանակաբաշխության զովազդային պաստառի դիմաց: Կտրամադրվի հյուրասիրություն:

Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովելու է՝

3.1 300 տեղանոց հարմարավետ տարածք՝ մրցույթի եզրափակիչ երեկոյի անցկացման համար:

300 հոգու համար նախատեսված հարմարավետ տաքացվող տարածք՝ կահավորված համապատասխան թվով աթոռներով:

3.2 Էլեկտրոնային քվեարկության ինտերակտիվ համակարգի ձեռքբերում, տեղադրում և տարածքում գործարկում:

«Էլեկտրոնային քվեարկության ինտերակտիվ համակարգ»-ը հավելվածների համախումբ է, նախատեսված ios և android համակարգերի համար, ինչպես նաև ներառում է քվերակության արդյունքները ներկայացնող desktop տարբերակ:

Քվեարկությանը մասնակցող անձինք մինչ քվերակության սրահ մուտք գործելը, Ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցների ուղղորդմամբ և օգնությամբ ներբեռնում են անհրաժեշտ հավելվածները, ակտիվացնում այն իրենց տրամադրված մեկանգամյա օգտագործվող նույնականացնող Quick Response Code-ով: Քվեարկության սրահ մուտք գործելու պահից սկսած համակարգը սպասարկող հավելվածները սկսում են գործել հատուկ ռեժիմում, փոխելով իրենց կոնտենտը, ինտերակտիվ եղանակով: Միաժամանակ բեմահարթակի էկրաններին երևում է քվերկության համար անհրաժեշտ գործիքակազմը:

Յուրաքանչյուր քվեարկությունից հետո, համակարգի desktop տարբերակում, որը երևում է բեմահարթակի էկրաններին, ցուցադրում են քվեարկության արդյունքները:

Քվեարկության ավարտից հետո հավելվածը օգտատիրոջը ներկայացնում է քվերակության վերջնական արդյունքները:

Համակարգը մեկանգամյա օգտագործվող նույնականացնող Quick Response Code-ի միջոցով բացառում է քվերակության սրահից դուրս քվեարկության դեպքերը:

Համակարգը ներառում է առանձնացված տվյալների բազա, AppStore և GooglePlay հարթակներում հավելվածի առկայություն, համակարգը ղեկավարող կայան, համակարգի համար անհրաժեշտ այլ գործիքամիջոցներ, որոնք սպասարկում են 300 օգտատիրոջ և պաշտպանված են արտաքին գործոններից անվտանգության գործիքակազմով:

Անվտանգության նկատառումներով, համակարգը ներառում է API / RASP / Firewall գործիքակազմ:

Քվերակության սրահից դուրս, այլ անձանց կողմից ներբեռնված հավելվածները, չեն գործի, քվերակությանը մասնակից անձանց կողմից իրենց փոխանցված, արդեն իսկ ակտիվ Quick Response Code-ով:

3.3 Երեկոյի ընթացքում յուրաքանչյուր անվանակարգի երեք թեկնածուների անունների, լուսանկարների և 2020 թվականի ընթացքում նրանց լավագույն ձեռքբերումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում էկրաններին՝ համապատասխան գրաֆիկական լուծումներով:

Լեդ էկրաններ 3 հատ, կետերի խտությունը 3-5մմ, չափսերը 2մ x 3մ, որոնք տեղադրված են դահլիճի տարբեր մասերում՝ ապահովելով հյուրերի համար տեսանելիությունը ցանկացած դիրքից:

Էկրանների պատկերներ.

1. Ծրագրի տարբերանշանի գրաֆիկական հոլովակ,
2. Յուրաքանչյուր անվանակարգի 3-ական թեկնածուներին ներկայացնող գրաֆիկական հոլովակ,
3. Յուրաքանչյուր թեկնածուին ներկայացնող գրաֆիկական հոլովակ,
4. Յուրաքանչյուր անվանակարգի երեք թեկնածուների և քվեարկության հետհաշվարկի հոլովակ (2 բոպե):

3.4 3մ x 2մ մեծ պաստառի դիզայն՝ պատկերված Ծրագրի լոգոտիպով, և տպագրություն:

3.5 Գովազդային պաստառի դիմաց հյուրերի համար ֆոտոսեսիայի կազմակերպում:

3.6 Երեկոյան մրցանակաբաշխության կազմակերպում ոռկ և/կամ ջազ խմբերի և համույթների 90 բոպե տևողությամբ համերգային ծրագիր, մրցանակ-հուշանվերների և հավաստագրերի հանձնում:

3.7 Հաղորդավար, ով ներկայացնելու է անվանակարգերն ու թեկնածուներին: Յուրաքանչյուր 2 անվանակարգի ներկայացումից հետո կիրականացվի երաժշտական մեկ համար կամ կատարում:

Համերգային ծրագրի ավարտին կկազմակերպվի հյուրասիրություն 300 հոգու համար (40 շիշ շամպայն – լցված բաժակների մեջ, կտրտած մրգեր՝ խնձոր - 14 կգ, նարինջ -14 կգ, բանան – 14 կգ, մանդարին -14 կգ):

3.8 Բեմի ձևավորման համար անհրաժեշտ պաստառների դիզայն և տպագրություն համապատասխան լոգոտիպով, չափսը՝ 50սմ x 3մ -3 պաստառ, 1մ x 3մ -2 պաստառ,

3.9 Լուսային համակարգ համերգի համար՝

- շարժական լույս BEAM R7 230WATT (կամ համարժեք) - 10 հատ,
- շարժական լույս LED WASH RGBW 30x12WATT (կամ համարժեք) - 6 հատ,

- ստատիկ լույս LED PAR RGBW 54x3 WATT (կամ համարժեք) - 4 հատ,
- թարթող լույսեր STROB 2000 WATT (կամ համարժեք) – 1 հատ,
- ստատիկ լույս PAR 64 (կամ համարժեք) - 4 հատ,

3.10 Ձայնային սարքավորումների համակարգ համերգի համար: Ձայնային տեխնիկան պետք է համապատասխանի տարածքում ջազային կամ ռոք խմբին անհրաժեշտ պարամետրերին

3.11 Ամբիոնի ապահովում

3.12 Մրցանակների ապահովում

Ապակյա մրցանակ տակդիրով, բարձրությունը՝ 15-20 սմ, լայնությունը՝ 8-10 սմ, դիզայն և պատրաստում 11 անվանակարգերում հաղթած մասնակիցների համար: «Հայրենիքի երիտասարդ պաշտպան» անվանակարգում կտրվի 3 մրցանակ: Ընդհանուր 13 հատ:

3.13 Հավաստագրերի տպագրության ապահովում

Թուղթը պատրաստված եղեռնի հուշահամալիրի ապրիլիքսանչորսյան ծաղիկներով, չափսը A5, տեղադրված ապակեպատ փայտե շրջանակի մեջ: Հավաստագրերի դիզայնը և տեքստը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ: Հավաստագրերը կտրվեն 11 անվանակարգերում հաղթած մասնակիցներին: «Հայրենիքի երիտասարդ պաշտպան» անվանակարգում կտրվի 3 հավաստագիր: Ընդամենը՝ 13 հատ:

3.14 300 հրավիրատոմսի տպագրություն

Մրցանակաբաշխության տարբերանշանով և նստատեղերի նշագրումով հրավիրատոմսերի երկկողմանի գունավոր տպագրություն: Հրավիրատոմսերի բաշխման գործընթացը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

3.15 Ծրագրի եզրափակիչ փուլի նկարահանում, տեսահոլովակի պատրաստում

20 րոպե տևողությամբ «Երիտասարդական մրցանակաբաշխություն-2020» տեսահոլովակի պատրաստում: Տեսահոլովակը պետք է պատրաստվի գրաֆիկական լուծումներով և նկարահանվի 4k ֆորմատով: Տեսահոլովակը պետք է պարունակի ամփոփ տեղեկատվություն մրցանակաբաշխության ողջ ընթացքի վերաբերյալ՝ ներառելով առաջինից երրորդ փուլերը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Զանիկ Սևոյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
«06» 05 2020 թ. կնքված
N ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-20/59 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ՀՀ 2020թ պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր, մինչև 30-ը	Ընդամենը
1	79951100/2	Միջոցառումների հետ կապված ծառայություններ												5490000	5490000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Զանիկ Սնոյան
(ստորագրություն)

Կ.Տ